- *Օգոստոսին աճի տեմպը թուլացավ՝ կազմելով 7.5 տոկոս (տ/տ), աճողական ցուցանիշը հասցնելով 7.1 տոկոսի:*
- *Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների ցուցանիշն օգոստոսին բարձրացավ 29.1 տոկոսով (տ/տ)՝ Ռուսաստանից ներհոսքերի հաշվին:*
- *Գնաճը բարձրացավ՝ սեպտեմբերին հասնելով 3.7 տոկոսի, և ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողեց:*
- *Թե՛ արտահանումը, թե՛ ներմուծումն օգոստոսին էապես նվազեցին (տ/տ)՝ արտացոլելով թանկարժեք քարերի և մետաղների վերաարտահանման փուլային դադարումը:*
- *Հունվարից օգոստոս ընկած ժամանակահատվածում բյուջեի հաշվեկշռում տարեկան կանխատեսված ՀՆԱ-ի 0.55 տոկոսի չափով աճողական պակասուրդ գրանցվեց:*

Օգոստոսին տնտեսական ակտիվության աճի տեմպը թուլացավ՝ հուլիսի 9 տոկոսից (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) նվազելով մինչև 7.5 տոկոս (տ/տ)՝ (պատկեր 1): Սա պայմանավորված էր արդյունաբերությունից և մանրածախ առևտրի ոլորտից բացի բոլոր ոլորտներում աճի տեմպի դանդաղմամբ: Օգոստոսին արդյունաբերական թողարկման ծավալն աճեց 5.8 տոկոսով (տ/տ)՝ բարձրանալով հուլիսի 4.2 տոկոսից (տ/տ), պայմանավորված հիմնական մետաղների արտադրության ծավալների մեծացման հաշվին մշակող արդյունաբերության 7.3 տոկոս (տ/տ) աճով: Հանքարդյունաբերության ճյուղը մնաց անփոփոխ հուլիսի 8.4 տոկոսով (տ/տ) անկումից հետո (տ/տ): Շինարարությունն աճեց 21.1 տոկոսով (տ/տ)՝ հուլիսի 26.1 տոկոսի համեմատ: Ծառայությունները (բացառությամբ առևտրի) աճեցին 6.7 տոկոսով (տ/տ)՝ համեմատած հուլիսի 11.1 տոկոսի (տ/տ) հետ: Մեծածախ և մանրածախ առևտրի աճի տեմպը թուլացավ՝ կազմելով 1.7 տոկոս (տ/տ): Աճի՝ 2025 թ. առաջին ութ ամիսների աճողական ցուցանիշը կազմել է 7.1 տոկոս (տ/տ)՝ գերազանցելով սպասումները:

Աճը հանգեցրել է աշխատաշուկայի արդյունքների բարելավման: Սակայն իրավաբանական անձանց գրանցումներն օգոստոսին նվազել են: Գործազրկության մակարդակն իջել է՝ 2025 թ. երկրորդ եռամսյակում կազմելով 12.3 տոկոս, նվազելով 2024 թ. երկրորդ եռամսյակի 13.8 տոկոսից, հիմնականում տղամարդկանց և քաղաքային գործազրկության նվազմամբ պայմանավորված: Դրա հետևանքով զբաղվածության և աշխատուժի կազմում մասնակցության մակարդակը կազմել է համապատասխանաբար 51.2 և 58.3 տոկոս: Իրավաբանական անձանց ամսական գրանցումներն օգոստոսին նվազել են 3.5 տոկոսով (ա/ա՝ տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ)՝ պայմանավորված անհատ ձեռներեցների և ՍՊԸ-ների գրանցումների ավելի ցածր թվով:

Օգոստոսին զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումները շարունակեցին վերականգնվել՝ բարձրանալով 29.1 տոկոսով (տ/տ): Նշվածը պայմանավորված էր 62.7 տոկոսով Ռուսաստանից (տ/տ) զուտ ներհոսքերի ավելացմամբ, որին բաժին է ընկնում ընդհանուր զուտ ներհոսքերի 64 տոկոսը և 9.7 տոկոսով (տ/տ) Միացյալ Նահանգներից զուտ ներհոսքերի աճով (պատկեր 2):

Սեպտեմբերին գնաճը բարձրացավ՝ կազմելով 3.7 տոկոս (տ/տ), փոքր-ինչ բարձրանալով օգոստոսի 3.6 տոկոսից (պատկեր 3): Աճին հիմնականում նպաստել են սննդամթերքը և ոչ ալկոհոլային խմիչքները՝ 5.8 տոկոս (տ/տ) կազմող գնաճով: Սեպտեմբերին գնաճի ցուցանիշի աճին նպաստել են նաև սպառողական զամբյուղում համակցված 18 տոկոս մասնաբաժին ունեցող առողջապահության (3.5 տոկոսով) և տրանսպորտի (4.1 տոկոսով) ճյուղերը: Սեպտեմբերի 16-ին Հայաստանի կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) որոշեց վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքը թողնել 6.75 տոկոս անփոփոխ:

Օգոստոսին արտահանման և ներմուծման ծավալները կտրուկ կրճատվեցին՝ վերաարտահանման փուլային դադարեցմամբ պայմանավորված (պատկեր 4): Օգոստոսին արտահանման ծավալներն իջան 40.8 տոկոսի (տ/տ)՝ համեմատած հուլիսին 15.3 տոկոսով կրճատման հետ: Ներմուծման ծավալները նվազեցին 28.3 տոկոսով (տ/տ)՝ հուլիսի 15.3 տոկոսով անկմանը հետևելով: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների առևտրի ծավալների անկումը շարունակվեց՝ կրճատվելով 77 տոկոսով (տ/տ): Այնուհանդերձ, նվազեց նաև կենդանիների (նվազումը՝ 42 տոկոս, տ/տ), տեքստիլի (նվազումը՝ 18.6 տոկոս, տ/տ) և կաշու և մորթու (նվազումը՝ 45.2 տոկոս, տ/տ) արտահանումը: Այս անկումը մասամբ չեզոքացվել է պատրաստի սննդամթերքի (աճը՝ 18.4 տոկոս, տ/տ) և մեքենա-սարքավորումների (աճը՝ 5.3 տոկոս, տ/տ)

Կազմեցին՝ ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org և տնտեսագետ Վիկի Չեմութայը, vchemutai@worldbank.org

արտահանման աճի հաշվին: Թանկարժեք մետաղների և քարերի վերաարտահանումը հաշվի չառնելով՝ արտահանումն օգոստոսին նվազել է 6.1 տոկոսով (տ/տ): 2025 թ. դանդաղ մեկնարկից հետո, Հայաստանի զբոսաշրջությունը կտրուկ վերականգնվեց՝ աճելով 11.1 տոկոսով (տ/տ):

Մեպտեմբերին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը կայուն է մնացել ա/ա՝ տ/տ արտահայտությամբ արժևորվելով 1.2 տոկոսով: Բայցևայնպես, ՀՀ դրամը արժեզրկվել է եվրոյի (4.4 տոկոսով, տ/տ) և ռուսական ռուբլու նկատմամբ (9 տոկոսով, տ/տ): Օգոստոսին իրական արդյունավետ փոխարժեքը (REER) արժեզրկվեց 2.2 տոկոսով (տ/տ): Համախառն պահուստներն աճեցին՝ հասնելով 4.2 միլիարդ ԱՄՆ դոլարի, որը համարժեք է ներմուծման 4 ամսվա ծածկույթի: 2025 թ. առաջին կիսամյակում զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներհոսքերն ավելացան՝ հասնելով տարեկան ՀՆԱ-ի 0.6 տոկոսին՝ հիմնականում հանքարդյունաբերությունում և ավիացիայում, հաջորդելով 2024 թ. ՀՆԱ-ի 0.3 տոկոս պատմական ցածր ցուցանիշին:

Օգոստոսին առևտրային բանկերի ավանդներն ու վարկերն աճեցին 1.9 տոկոսով (ա/ա): Երկուսի ավելացումն էլ պայմանավորված էր ՀՀ դրամով արտահայտված միջոցների ընդլայնմամբ: Վարկերի աճը հիմնականում արդյունաբերության (արտարժութային) և սպառողական (ՀՀ դրամ) վարկերի հաշվին էր: Ընդհանուր ավանդների փոխարժեքով ճշգրտված տարեկան աճը կազմել է 15.8 տոկոս (տ/տ) և վարկերի դեպքում՝ 27.2 տոկոս (տ/տ) (պատկեր 5):

Օգոստոսին բյուջեն հավասարակշռված էր: Հարկային եկամուտները (այդ թվում՝ հիփոթեքի հետ կապված եկամտային հարկը) անվանական արտահայտությամբ աճեցին 10.9 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված ԱԱՀ-ի (աճը 21 տոկոս, տ/տ), եկամտային հարկերի (աճը՝ 10.4 տոկոս, տ/տ) և շահութահարկերի (աճը՝ 35.3 տոկոս, տ/տ) հավաքագրման ավելի բարձր ցուցանիշով: Շրջանառության հարկի հավաքագրումը շեշտակի՝ 72.4 տոկոսով (տ/տ) ավելացավ՝ հետևելով 2025 թ. սկզբին դրույքաչափի բարձրացմանը: Ընդհանուր ծախսերը կրճատվեցին 3 տոկոսով (տ/տ): Սա պայմանավորված էր 24.3 տոկոսով (տ/տ) կապիտալ ծախսերի նվազմամբ, հիմնականում պաշտպանական ծախսերի 24 տոկոսով (տ/տ) նվազման հաշվին: Կրթության ծախսերը կրկնապատկվեցին (տ/տ)՝ դպրոցաշինության և հիմնանորոգման հավակնոտ ծրագրերի հաշվին: Ընթացիկ ծախսերն ավելացան սոսկ 1.7 տոկոսով (տ/տ, անվանական արտահայտությամբ)՝ հիմնականում պայմանավորված սոցիալական պաշտպանության ծախսերով (աճը՝ 6.5 տոկոս, տ/տ): Աճողական պակասուրդը հունվար-օգոստոս ժամանակահատվածում հասավ կանխատեսվող տարեկան ՀՆԱ-ի 0.55 տոկոսին՝ 2025 թ. համար ծրագրված՝ ՀՆԱ-ի 5.5 տոկոս պակասուրդի մեկ տասներորդին:

Կազմեցին՝ ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org և տնտեսագետ Վիկի Չեմութայը, vchemutai@worldbank.org

Պատկեր 1. Տնտեսական ակտիվության տեմպը դանդաղեց՝ 2025 թ. օգոստոսին կազմելով 7.5 տոկոս (տ/տ)

(Հայաստանի տնտեսական ակտիվության ինդեքս, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Պատկեր 2. Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների երկնիշ աճը շարունակվեց

(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 3. Տարեկան գնաճը 2025 թ. օգոստոսին շարունակել է փոքր-ինչ բարձրանալ

(ՍԳԻ գնաճ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 4. Արտահանումն ու վերաարտահանումը շարունակեցին նվազել 2025 թ. օգոստոսին

(միլիարդ ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Կազմեցին՝ ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org և տնտեսագետ Վիկի Չեմութայը, vchemutai@worldbank.org

Պատկեր 5. Վարկերի ու ավանդների բարձր աճը շարունակվեց, ընդ որում ավանդների աճի տեմպն արագացավ

(%, տ/տ, փոխարժեքով ճշգրտված)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Պատկեր 6. 2025 թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում բյուջեում փոքր պակասուրդ գրանցվեց

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝Ֆինանսների նախարարություն

Կազմեցին՝ ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org և տնտեսագետ Վիկի Չեմութայը, vchemutai@worldbank.org